ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՇՁԲ-19/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման /բանակցությունների անցկացման նիստի

ք. Երևան « 25 » ապրիլի 2019թ.

Ժամը՝ 14 ³⁰

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Մ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Վ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Գ. Միրզոյան, Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Հ. Վարդանյան
Բանակցային կողմ «ԳԵՎԱՅՈՒՀ» ՍՊԸ-ի տնօրեն	Գ. Բազիկյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Բանակցությունների վարման օրվա, ժամի, վայրի, մասնակիցների և արդյունքների մասին տեղեկություններ
- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված եզրակացության վերաբերյալ տեղեկություններ,
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Բանակցությունների վարման օրվա, ժամի, վայրի, մասնակիցների և արդյունքների մասին տեղեկություններ

Հիմք ընդունելով կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՇՁԲ-19/21» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Գնման ընթացակարգ), շրջանակներում սույն թվականի ապրիլի 25-ին, ժամը 14:30-ին վարվել են գների նվազեցման շուրջ բանակցություններ: Բանակցությունները վարվել են բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վարչական շենքում, ք.Երևան, Արմենակյան 129, 2-րդ հարկ, № 5 սենյակում:

Հայտեր ներկայացրած մասնակիցներից նիստին ներկայացել էր միայն «ԳԵՎԱՅՈՒՀ» ՍՊԸ-ն: Բանակցությունների արդյունքում «ԳԵՎԱՅՈՒՀ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ նվազեցված գնային առաջարկները.

ՀՀ	Մասնակցի	Մասնակցի գնային առաջարկը (ՀՀ դրամ)			
		Ծառերի տնկում / Դեկորատիվ ծառ (օձառաձառ)		Ծառերի տնկում /Թթենի	
	Անունը	առանց ԱԱՀ	Ընդհանուր	առանց ԱԱՀ	Ընդհանուր
1	«ԳԵՎԱՅՈՒՀ» ՍՊԸ	333333	400000	250000	300000

2. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված եզրակացության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի ապրիլի 18-ին, հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեից սույն թվականի ապրիլի 23-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

3. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՇՁԲ-19/21» ծածկագրով գնման ընթացակարգի 1-3 չափաբաժինների համար ընտրված մասնակից ճանաչել «ԳԵՎԱՅՈՒՀ» ՍՊԸ-ին,

2.2 Հանձնաժողովի քարտուղարին.

Պայմանագրի կնքման նպատակով, անգործության ժամկետի ավարտից հետո, «ԳԵՎԱՅՈՒՀ» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանս (ԳՊ/ԳԱՊ)	_____	Մ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	_____	Վ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	_____	Գ. Միրզոյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	_____	Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	_____	Հ. Վարդանյան